



Հայաստանեաց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակօրեայ Դպրոցի
ամսաթերթ



Նոյեմբեր 2005

Մ Ա
Ա Ր
Շ Ա
Տ Ա
Շ Գ
Ո Վ
Ց Ա
Ց Ւ
Ց Ւ
Ց Ւ



Հրեշտակմերու քանդակմեր Աղթամարի Սուրբ Խաչ Եկեղեցւոյ ճակատին: Հայաստանեաց Եկեղեցին Նոյեմբեր 5-ին կը տօնէ հրեշտակապետեր Գաբրիէլի եւ Միքայէլի յիշատակը: Էջ 10

Այս թիւով . . .

Առաքինութիւնը բարոյական բարեմասնութիւն է, այսինքն յատկութիւն, արժանիք, կենցաղի կատարելութիւն: Էջ 2

Հաւատքը լուսեղէն անմարմին պարան է Աստուծոյ կողմէ երկնքէն մարդոց իշած: Էջ 3

Պատարագի երկրորդ բաժինը կը կոչովի «Պաշտօն Ծաշու» կամ «Ծաշու կարգ»: Այս բաժնին մէջ է որ Քրիստոս ժողովութիւն կու գայ ու մեզի կը հանդիպի իր խօսքին միշոցաւ: Էջ 4-5

Բայց մինչ մենք մեր մեղքերուն պատճառով հոգեւորապէս մեռած էինք, Աստուծ որ առատ է իր ողորմութեամբ, մեզի հանդէա ունեցած մեծ սիրոց համար, որով մեզ սիրեց, մեզ վերստին կեանքի կոչեց Քրիստոսով: Էջ 6

Աստուծ ինք ըլլալով բարին, իրմէ ճառագայթող ամէն ճշմարտութիւն, սկզբունք, անպայման բարի են: Էջ 7

Աստուծածնի ընածայման օրը կը կատարովի Նոյեմբեր Զ1-ին, որ օր ալ հանդիպի այդ թուականը: Էջ 9

Ժամանակին Յիսոնակը, Մեծ Պահրի նման ամբողջութեամբ պահրի շրջան մըն էր, սակազն այսօր անոր ընթացքին կը գտնուին պահրի երեք շաբաթներ միացն: Էջ 9

Բեմն ու խորանը իրենց կարգին Եկեղեցւոյ բաժիններէն են ու մէկը միւսին կից բաժիններ ըլլալուն շփոթի առարկաց կրնան դառնալ: Էջ 10

Նաեւ... Պահուած բառ Էջ *, Աստուծաշունը փոքրիկներուն համար Էջ 11-14, Ո՞րն է ճիշդ պատասխանը: Էջ 15-19 Կարճ լուրեր: Էջ 20

ՄԱԾՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

Հայաստանեաց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ

Կիրակօրեաց Դպրոցի ամսաթերթ

Խմբագիր՝

Շաղիկ Պոյածեան

Աշխատակիցներ՝

Յամիկ Նաճարեան
Երան Լոշխամեան
Գարոլ Մանուկեան
Թամար Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Նիկոլ Դանիէլեան
Թորոս Պապիկեան

ՄԱԾՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ-ը

կը գտնուի նաեւ համացանցի (internet) վրայ: Այցելեցէ՞ք www.sourphagop.org, ձախ կողմի կոճակներէն «Պարբերաթերթ»ը ձեզ կ'ուղղէ դէպի ներկայ եւ նախկին թիւրը...

Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ Կիրակօրեաց դպրոցի կամաւոր խմբակը

Ուսուցիչներ՝

Սալբի Բագլաեան
Վերժին Գէպթամեան
Յամիկ Նաճարեան
Երան Լոշխամեան
Գարոլ Մանուկեան
Վերա Կարապետեան
Թամար Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Աշխեն Իշխանեան
Յամիկ Գանաճեան

Տնօրէն՝

Թորոս Պապիկեան
Լուսանկարիչ՝
Նիկոլ Դանիէլեան
Պարբերաթերթ՝
Շաղիկ Պոյածեան

Կեանքի դասեր

Հայատանեաց Եկեղեցւոյ տօնացոյցը հարուստ է իր բազմաթիւ տօներով եւ յիշատակման օրերով: Այս տօներէն իրաքանչիւրը թէեւ նոյն ժողովրդականութիւնը չունի, կամ նոյն ձեւի եւ տարողութեամբ շքեղ եւ հանդիսաւոր տօնախմբութիւններով չի յիշատակուիր, սակայն անոնցմէ ամէն մէկը մեզի կու գայ յիշեցնելու թէ իրաքանչիւր սուրբի տօն, կամ տաղաւար կամ անուանայիշատակում իր ձեւով փառաքանութեան առիթ մըն է մեր պատմութենէն եւ անցեալէն մեզի հասած հոգեւոր արժէքներու:

Նոյեմբեր ամիսը բացառութիւն չէ: Մեր Եկեղեցին անոր ընթացքին կը տօնէ Ընծայում, Ամենայն սուրբերու տօն, իրեշտակապետերու յիշատակման տօն եւ Յիսնակ: Այս տօներէն իրաքանչիւրը խոկման առիթ է, այսինքն առիթ՝ տօնին պատմական իրադարձութիւններէն եւ դէպքերէն անդին նայելու թէ ի՞նչ արժէքներու կը վերաբերի այդ տօնը, հոգեւոր արժէքներու, եւ ի՞նչ «կեանքի դաս» կը փոխանցէ ան մեզի:

Արագ ակնարկ մը մեր Եկեղեցւոյ տօնացոյցին արդէն իսկ բաւարար է հաստատելու թէ հոն տեղ գտած իրաքանչիւր տօն, ուրիշ արժէքներու կարքին, մեզի կը փոխանցէ մարդկային առաքինութեանց մասին դասեր: Այսպէս, առնելով օրինակը Նոյեմբեր ամսուան ընթացքին զուգադիպող տօներուն, կարելի է ըսել թէ անոնք մեզի կը փոխանցեն նուրման, բարութեան, զոհողութեան, մարդասիրութեան, ինքնանաշման եւ ուրիշ առաքինութիւններու երկա՞ր շարքի մը մասին դասեր:

Առաքինութիւնը բարոյական բարեմասնութիւն է, այսինքն յատկութիւն, արժանիք, կենցաղի կատարելութիւն: Ան կ'ենթադրէ բարեպաշտ եւ օրինակելի նկարգիր որուն հակառակը պիտի ըլլար անառակութիւնը կամ մոլութիւնը: Եւ մեր Եկեղեցւոյ տօնացոյցը առիթ կ'ընծայէ մեզմէ իրաքանչիւրին կանոնաւոր հերթականութեամբ ինքնամփոփման եւ ինքնաքննութեան, ճանշնալու համար մենք մեզ եւ մեր հոգիներէն ներս փնտոելու առաքինութիւններու գոյութիւնը եւ մեր գործերուն մէջ՝ անոնց գործէական արտայալութիւնը:

Ամսական տօնացոյց

Նոյեմբեր 5: Սուրբ
Բրեշտակապետացն Գաբրիէլի և
Միքայէլի

Նոյեմբեր 19: Ամենայն Սրբոց

Նոյեմբեր 20: Բարեկենդան
Յիսուսական Պահոց

Նոյեմբեր 21: Ընծայումն Սուրբ
Աստուածածնի



Իմաստուն մը ըսաւ . . .

Ինչպէս որ լոյսին շողը արեւէն իշնելով կը մտնէ բոլոր երդիքներէն ու լասամուտներէն ներս եւ կը ձեւատրովի համաձայն տան մեծութեան կամ փոքրութեան՝ լուսաւորելով այնտեղ գտնուածները, նոյնպէս հաւատքը Աստուծմէ մարդոց մէջ կ'իշնէ եւ անոնց սրտերուն ու հոգիներուն մէջ կը բճակի եւ զայն ընդունողներուն ընկալման չափով կը բովանդակովի: Եւ ինչպէս որ կնիքի նախատիպը երբ մոմի վրայ ձեւանայ, կնիքի նմանութիւնը կը տեսնովի մոմին վրայ, այսպէս ալ հաւատքը Աստուծոյ կողմէ մարդոց մէջ կը տպաւորովի եւ անոնց սրտերուն ու հոգիներուն մէջ կերպաւորուելով կը կնքովի:

Հաւատքը լուսեղէն անմարմին պարան է Աստուծոյ կողմէ երկնքէն մարդոց իշած, որպէսզի երբ մեր ձեռքերը վեր առնենք, Աստուծոյ մօտ բարձրանանք, այսինքն բազմապիսի բարեգործութիւններով:

Հանդիպում Աստուծոյ հետ կամ՝ բացատրական պատարագ

Հոկտեմբերի թիւվ մենք ծանօթացանք պատարագի չորս բաժիններէն առաջինին՝ Պատրաստութեան, որուն ընթացքին քանանան կը զգեստաւորուի եւ գոց վարագոյրի ետին կը պատրաստուի նշխարն ու գինին։ Նոյեմբերի այս թիւվ պիտի ծանօթանանք Սուրբ Պատարագի երկրորդ բաժինէն։ Ծաշու կարգի մէկ մասին։

Պատարագի երկրորդ բաժինը կը կոչուի «Պաշտօն Ծաշու» կամ «Ծաշու կարգ»։ Այս բաժնին մէջ է որ Քրիստոս ժողովուրդին կու գայ ու մեզի կը հանդիպի իր խօսքին միջոցաւ, այլ խօսքով, Աստուածաշոնչի ընթերցանութեամբ։

Այս բաժնին մէջ խրաքանչիւր աղօթք, շարական, սաղմոս կամ ծիսակատարութիւն կը վերաբերի Քրիստոսի իբր Աստուծոյ Խօսք, կամ Աստուծոյ գերագոյն արտավայտութեան ձեւ։

Երբ խորանին վարագոյրը կը բացուի, քահանան խաչն ու բուրվառը ձեռքին, խնկարկելով

Ի՞նչ ձեւով ժողովուրդը կը մասնակցի թափօրի արարողութեան ընթացքին

Պատարագի ընթացքին, հաւատացեալ ժողովուրդը պարզ հանդիսատեսի պէս կրաւորական ձեւով չի հետեւիր արարողութեան։ Այսպէս օրինակ, երբ քահանան թափօրով կը շրջի, հաւատացեալներ մօտենալով անոր կ'ըսեն.-

«Յիշեցի՛ր եւ զմեզ առաջի նման Գառինն Աստուծոյ», այսինքն «Մեզի ալ յիշէ Աստուծոյ գառին՝ Քրիստոսի առջեւ»։

Այս խօսքով կը խնդրեն քահանայէն որ պատարագ ընծալած ընթացքին յիշէ նաեւ հաւատացեալ ժողովուրդը։



Արձաթեայ բուրվառ- 18-րդ դար

Կ'իջնէ բեմէն վար ու ժողովուրդին մէջ կը դառնայ, լճկերակցութեամբ դպիրներուն որոնք միատեղ շարական կ'երգեն: Այս արարողութիւնը կը կոչուի Թափօր: Ապա քահանան դարձեալ կը բարձրանայ բեմ:

Իսկ Ի՞՞չ կը խորհրդանշէ Թափօրը: Թափօրը կը խորհրդանշէ Յիսուսի մարդեղացումը, Անոր աշխարհ գալը եւ ժողովուրդին մէջ ապրիլն ու քարոզելը: Այս բաժինը կը կոչուի նաեւ, իր բացատրութեան համաձայն՝ «Աշխարհագալոց»:

Ժամամուտը կը սկսի Աստուծմէ օրհնութիւնը խնդրելով, երբ սարկաւագը կ'ըսէ «Եւ եւս խաղաղութիւն զՏէր աղաչեսցուք. լճկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛: Օրհնեա՛ Տէր», այսինքն «Նաեւ խաղաղութեան համար աղաչենք Տիրոց. Ընդունէ՛, պահպանէ՛ եւ ողորմէ՛: Օրհնէ՛ Տէր:»

Սարկաւագի այս խնդրանքին իբր պատասխան, քահանան կ'արտասանէ «Տէր Աստուած մեր» աղօթքը եւ դպիրները, ըստ օրուայ տօնացոյցին կ'երգեն համապատասխան շարական մը:

Ահա «Տէր Աստուած մեր» աղօթքին բառերը.-

Տէր Աստուած մեր, որ կարողութիւնդ անքննելի է եւ փառքդ անհասանելի, ողորմութիւնդ անշափ է եւ գթութիւնդ անբաւ, քու անսպառ մարդասիրութիւնդ շնորհէ ժողովուրդիդ եւ այս սուրբ տաճարին. ու մեզի, մեր աղօթակիցներուն հետ, առատօրէն բաշխէ ողորմութիւնդ եւ գթութիւնդ. որովհետեւ քեզի վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յափտեանս յափտենից: Ամէն:

Շարունակելի...

Նոր Կտակարանի նամակները կը խօսին մեզի

Իր տարիքով հանդերձ, Աւետարանը «իսկական եւ առօրեայ» կեանքէն անկայ գիրք մը չէ: Ընդհակառակը, ան իսկապէս գործէական եւ գործնական գիրք մըն է, որովհետեւ զայն ընթերցողին կեանքը կրնայ բարեփոխել:

Այսպէս, Նոր կտակարանի նամակները այսօր տակափն կը խօսին մեզի, եւ եթէ ոչ բացարձակ ամբողջութեամբ, վստահօրէն մասամբ կը համապատասխանեն ներկայ ժամանակաշրջաններուն մէջ կիրարկելի իրականութիւններու:

Մահուընէ դէպի կեանք Հատուած Պողոս Առաքեալի նամակէն Եփեսացիներուն 2.1-10

Անցեալին դուք հոգեւորապէս մեռած էիք ձեր յանցանքներուն եւ մեղքերուն հետեւանքով: Այդ մեղքերով կ'ապրէիք, այս աշխարհի սորովութեան համաճայն, ենթարկուելով Սատանային որ մթնոլորտին մէջ գործող ոգեղջն ոյժերուն իշխանն է, եւ ներկայիս կը գործէ Աստուծոյ անհնազանդ մարդոց մէջ: Փամանակ մը մենք բոլորս ալ նոյնապէս անհնազանդ էինք եւ մարդկային բնութեան յատուկ ցանկութիւններով կ'ապրէինք՝ մեր մարմինին ու մտքին բոլոր փափաքները կատարելով, եւ իրապէս Աստուծոյ պատիժին արժանի էինք, միւսներուն պէս:

Բայց մինչ մենք մեր մեղքերուն պատճառով հոգեւորապէս մեռած էինք, Աստուծո, որ առատ է իր ողորմութեամբ, մեզի հանդէպ ունեցած մեծ սիրոյն համար, որով մեզ սիրեց, մեզ վերստին կեանքի կոչեց Քրիստոսով: Այո՛, շնորհք ըրաւ՝ փրկելով մեզ: Քրիստոսի հետ յարուցանեց եւ անոր հետ միասին ալ երկինքի մէջ նստեցուց մեզ, որ Քրիստոս Յիսուսի միացած ենք, որպէսզի գալիք բոլոր ժամանակներուն մէջ մարդիկ տեսնեն այն գերազանցօրէն մեծ շնորհքը, որ Աստուծած այնքան բարութեամբ ցոյց տուա մեզի, Քրիստոս Յիսուսի անձին մէջ:

Այո՛, Աստուծոյ շնորհքովը փրկուեցաք, քանի հաւատացիք: Փրկութիւնը ձեր արժանիքը չէ, այլ՝ Աստուծոյ պարգեւն է: Ձեր գործերով շահուած չէ անիկա, որպէսզի ուեւէ մէկը

չպարծենայ: Աստուծոյ նոր ստեղծագործութիւնն ենք մենք, քանի Քրիստոս Յիսուսի միացած ենք. ստեղծուած՝ կատարելու համար այն բարի գործերը, որոնց համար Աստուծած սկիզբէն մեզ պատրաստեց, որպէսզի անոնցմով լեցնենք մեր կեանքը:



Աւետարանի կողք

Քրիստոնէական բարոյագիտութիւն

Ի՞նչ է բարին

Բայց ի՞նչ է բարին եւ կեանքի ընդարձակ աշխարհին մէջ ու՞ր է անոր տեղը: Ահաւասիկ բուն հարցը, որուն դիմաց մարդիկ դիրք կ'առնեն. եւ հոն է, որ իրարմէ կը տարբերին՝ իրենց այլազան մօտեցումներով, հասկացողութեամբ եւ վճիռներով:

ա.- Ըստ ոմանց, բարին հաճովքին մէջ կը կայանայ: Մենք երջանիկ կ'ըլլանք այն ատեն, երբ մեր բոլոր զգայարանքները, զգացական մեր կեանքի պահանջները գոհացած, լիացած ըլլան: Եւ չար է այն՝ որ Շեղութիւն կու տայ մեր զգայարանքներուն, եւ որուն չկարենալով հանդուրժել, կը վաճենք զայն մեր կեանքի սահմաններէն: Հետեւաբար կեանքը այս ձեւով կը վերածուի հաճովքի գացող վազքի մը միայն:

բ.- Ըստ ուրիշներու, բարին սեփական շահին մէջ կը կայանայ: Ինչ որ մեր անհատական շահը կ'ապահովէ, ինչ որ մեզի առաւելութիւն կը բերէ, մասնաւրաբար նիւթական տեսակէտէ, այդ է բարին: Եւ կամ՝ աւելի բարձր մակարդակի վրայ, այն ինչ որ ընկերութեան շահը կը բերէ՝ այն է բարին:

Առանց անդրադառնալու ուրիշ ըմբռնումներու եւ հասկացողութեանց կը գոհանանք գլխաւրաբար այս երկուքին յիշատակութեամբ: Բայց անմիջապէս կը նկատենք, որ այս երկուքը չեն կրնար մեր կեանքը քրիստոնէական նկարագրին պատշաճեցնել, մեր քրիստոնէական ոգիին հետ հաշտ ընթանալ: Արդ, որպէսզի կարենանք մեր դիրքը յատակացնել, անցնինք անմիջապէս ճշդելու, թէ ըստ քրիստոնէական ըմբռնումին ի՞նչ է բարին:

գ.- Քրիստոնէական մտածումով բացարձակ բարին Աստուած ինքն է: Այսպէս, օր մը երբ մեծահարուստ երիտասարդ մը մօտեցաւ Յիսուսի եւ ըսաւ.

«Բարի՛ Վարդապէտ, Ի՞նչ բարի գործ պէտք է կատարենմ, յափտենական կեանքը ընդունելու համար».

Յիսուս անոր հարցումին պատասխանելէ առաջ ըսաւ.

«Ինչո՞ւ բարիի մասին կը հարցնես ինծի: Բարին մէկ է, միայն Աստուած բարի է:»

Աստուած ինք ըլլալով բարին, իրմէ ճառագայթող ամէն ճշմարտութիւն, սկզբունք, անպայման բարի են: Աստուծոյ բարութիւնը ըստ ինքեան անմատչելի է, սակայն, կը հաղորդակցինք իր բարութեամ՝ իր Որդույն միջոցաւ, որովհետեւ Ան է ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը: Ան է օր ըսաւ. «Ես եմ լոյս աշխարհի»:

Հետեւաբար, մեր երջանկութիւնը կը կայանայ հետեւորդութեան մէջ Քրիստոսի կեանքին: Գերագոյն երջանկութիւնը կը ստեղծուի ու կը տիրակալէ մեր մէջ այն ատեն, երբ մենք կարենանք հաղորդութեան մէջ ըլլալ բարին, բարիի ակնաղբիրին՝ Աստուծոյ հետ, մեր կեանքին մէջ Աստուծոյ Միածին Որդույն, Յիսուսի Քրիստոսի ուսուցած ճշմարտութիւններուն, բարոզած բարոյական սկզբունքներու կիրարկութեամբը:

«Աստուածաբանութիւն», Գարեգին Ա. (2005).

Գարեգին Ա. Աստուածաբանական եւ Հայագիտական Մատենաշար Թիւ 5

Պահուած բառ

մ	ա	ր	կ	ո	ս	ր	ի	կ	ս	ա	հ
ա	ա	ն	ի	կ	մ	ա	ր	ի	ա	մ	ա
տ	ա	թ	ր	ա	մ	ք	ա	դ	ա	ք	դ
թ	ա	ս	ա	ն	ա	կ	ա	տ	ա	ր	ն
է	յ	ն	կ	ա	հ	ա	ս	ի	ւ	ի	ր
ն	ն	յ	ն	վ	հ	ա	ն	ն	է	ս	դ
ս	վ	ե	ս	ա	ն	ա	հ	ի	ն	տ	ն
ե	ս	տ	ա	ր	ա	ր	ա	տ	ւ	ն	ւ
ս	է	ս	կ	ի	հ	ս	ա	ի	ր	ս	թ
ա	փ	ա	ւ	չ	ն	ե	գ	է	ն	ս	ի
յ	ի	ս	ն	ւ	ս	ն	ւ	ր	ք	ն	ւ
ի	ի	ւ	դ	ա	ք	ե	ր	ե	ւ	ա	ն

Արի	Հաղորդութիւն	Սուրբ
Արարատ	Հասկ	Սանահին
Գիւտ	Ղուկաս	Սկիբ
Երեւան	Մարիամ	Տառ
Եգիսոս	Մատթեոս	Քար
Եսայի	Մարկոս	Քաղաք
Թանկ	Մարթա	Քրիստոս
Իւղաբեր	Յովհաննէս	
Իսահակ	Յիսոս	Պահուած բառ
Կատար	Յովսէփ	8 գիր՝ Սուրբ Գիրք
Կիրակոս	Սառա	Նախորդ Պահուած Բառը՝
Կառավարիչ	Սուլ	յաւերժ

**Սուրբ Աստուածածնին
նուիրուած տօներէն
«Ընծայում Աստուածածնի»**



Հստ աւանդութեան, Մարիամ Աստուածածին զաւակն էր Յովակիմի եւ Աննայի: Ան ովստով ստացուած զաւակ ըլլալուն, ծնողը, իրենց ովստին համեմատ Մարիամ ընծայած են տաճարին երբ ան երեք տարեկան էր, որպէսզի հոն աստուածապաշտութեամբ զարգանայ ու տաճարին ծառայէ:

Այս նուիրման օրն է որ կը յիշատակուի Աստուածածին ընածայման օրը որ կը կատարուի ամէն տարի անշարժ թուականի մը, Նոյեմբեր 21-ին, որ օր ալ հանդիպի այդ թուականը:

Ընծայման տօնը Աստուածածին նուիրուած տօներէն մէկն է: Անկէ անկախ կան նաև Աստուածածին կեանքն ու տիպարը ծանօթացնող եւ յիշատակող այլ տօներ որոնք են Յղութեան տօն, Ծնունդ Սուրբ Աստուածածին, Աւետում, Վերափոխում, Գիւտ գօտիի եւ Գիւտ տուփի:

**Յիսնակ
Նոյեմբեր 18**

Յիսնակ բառը կը վերաբերի յիսուն թիւին: Ան իրապէս ալ յիսուն օրերու վրայ երկարող ժամանակամիջոց մըն է որ կը կանխէ Աստուածայալութեան կամ Ծննդեան տօնը: Իրապէս ալ, Յունուար 6-էն դէպի ես համրելով յիսուն օրեր, մենք պիտի յանդինք Նոյեմբեր 18-ին որ Յիսնակի առաջին օրն է:


Հայաստնեայց եկեղեցին կը տօնէ Բարեկենդան Յիսնակաց Պահոց, այսինքն Յիսնակի առաջին օրուան ամենէն մօտ զուգադիպող Կիրակին: Այս տարի, Յիսնակի բարեկենդանի կիրակին կը զուգադիպի Նոյեմբեր 20-ին:

Ժամանակին Յիսնակը, Մեծ Պահքի նման ամբողջութեամբ պահքի շրջան մըն էր, սակայն այսօր անոր ընթացքին կը գտնուին պահքի երեք շաբաթներ միայն:

Առաջինը Յիսնակաց պահք անունով, երկրորդը Սուրբ Յակոբի պահք կոչուած, իսկ երրորդը՝ Ծննդեան:

**Եւ ընդ Սերոբէսն եւ ընդ
Քերոբէսն միաձայն . . .**

**Եւ Սերովբէներուն եւ
Քերովբէներուն հետ
միասնաբար . . .**



Այս տողը Սուրբ Պատարագին հետ մտերմացած հաւատացեալներուն ծանօթ պիտի թուի: Իսկապէս ալ ան կ'արտասանուի պատարագի այն բաժնի ընթացքին ուր դպիրներն ու ժողովուրդը կ'երգեն «Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց»:

Այս փառաբանական երգեցողութիւնը կը կատարուի համաձայն սուրբ գիրքի այն հատուածին ըստ որուն Սերովբէները եւ Քերովբէները, այլ խօսքով՝ հրեշտակները, հաւաքուած Աստուծոյ աթոռին շուրջ մշտապէս կ'օրինեն ու կը փառաբանեն զԱստուած բացականչելով .-

«Սուրբ, Սուրբ, Սուրբ է երկնային զօրքերու Տէրը եւ ամբողջ երկիրը լեցուն է Անոր փառվ»:

Այս ներածականէն կ'եզրակացնենք թէ «Սերովբէ» եւ «Քերովբէ» բառերը հրեշտակներուն տրուած այլ անուններն էն, հրեշտակներ որոնց պետերուն՝ Գաբրիէլի եւ Միքայէլի յիշատակը կը տօնէ Հայատանեաց եկեղեցին Նոյեմբեր 5-ին:

Բե՞մ թէ խորա՞ն

Հայկական եկեղեցիի մը շէնքը կամ կառոյցը բաղկացած է զանազան մասերէ որոնցմէ իւրաքանչիւրին տրուած է իւրազատուկ անուն: Այսպէս մեզի ծանօթ են բանկալ, գալիք, ատեան եւ աւանդատուն բառերը:

Բեմն ու խորանը իրենց կարգին եկեղեցւոյ բաժիններէն են ու մէկը միւսին կից բաժիններ ըլլալուն, շփոթի առարկայ կրնան դառնալ:

Բեմը մեր եկեղեցիններէն ներս արեւելեան կողմը կանգնուած գետնէն թիչ մը բարձր այն տեղն է որուն վրայ կը գտնուին խորանն ու սեղանը: Բեմին վրայ է որ կը կատարուի պատարագի մատուցումը եւ անոր բարձրութեան շնորհիւ, հաւատացեալներ, եկեղեցիին բոլոր անկիւններէն առանց դժուարութեան կը հետեւին արարողութեան:

Բեմ բարձրանալու համար նկատի առնուած են անոր երկու կողմերէն բարձրացող աստիճաններ: Իսկ բեմէն ճիշդ վար կը գտնուի դասը, հոն ուր կը կանգնին դպիրներն ու պաշտօնեանները, որ ինքնին եւս գետնէն մէկ բայլ բարձր շինուած բաժին մըն է:

Գալով խորանին, կարելի է ըսել թէ ան բեմին մէկ մասն է: Աւելի ճշգրիտ բացատրութեամբ, ան բեմին ետենի մասն է որ կամարով վրայէն գոցուած կէս վրանաձեւ տեղ մը կը կազմէ, առշեւը ամբողջութեամբ բաց դէպի հաւատացեալ ժողովուրդը եւ չորս սիւներու վրայ հաստատուած: Հետաքրքրական մանրամանութիւն մըն է հետեւեալը, թէ խորանը կանգնեցնող պիւներէն իւրաքանչիւրը նուիրուած է չորս աւետարանիններէն իւրաքանչիւրին:

Խորանին մէջտեղ կանգնուած է սեղանը, տափարակ եւ մարմարեայ, որպէսզի հոն կատարուի պատարագի խորհուրդը: Խորանի ետին նկատի առնուած է ազատ անցք մը ուրկից կը կատարուին վերաբերումն ու խնկարկութիւնները եւ պատարագի ընթացքին պէտք եղած զանազան երթեւեկները:

Աստուածաշունչը՝ պատմուած փոքրիկներուն Աստուած բարեկամներս կ'ազատէ



Ես Մովսեսն եմ, ձեզի պիտի պատմեմ թէ ինչպէս Եգիպտոսի թագաւորը՝ Փարաւոնը, Իսրայէլացիները ազատ արձակելէ ետք միտքը փոխեց եւ որոշեց մեզի հալածել:


Իսրայէլացիները եւ ես արդէն հեռացած էինք Եգիպտոսէն, երբ Փարաւոնը անդրադարձաւ որ չէր ուզեր մեզի կորսնցնել որովհետեւ կը նախընտրեր մեզի աշխատցնել:

Թէեւ ես կը կարծէի որ Փարաւոնը սորված էր Աստուծոյ հնագանդիւ, սակայն ան իր բանակը դրկեց մեր ետեւէն, մեզ հետապնդելու:

Մենք քալեցինք ու քալեցինք, ապա Աստուած ըսաւ որ հաստատուինք Կարմիր Ծովուն եզերքը:

Յանկարծ լսեցինք Եգիպտական բանակին աղմուկը մեր ետեւէն:

Մեր դիմացն Էր Ծովը իսկ մեր ետեւը Եգիպտացիներուն



Կարմիր ծովը շատ ընդարձակ ծով մըն էր, եւ որովհետեւ Մովսէսն ու իսրայէլացիները նաւեր չունէին, անոնք կարծեցին որ շրջապատուած էին, եւ այդ իսկ պատճառաւ շատ վախցան եւ յուսահատեցան:

բանակը:

Երթալիք տեղ չունէինք: Ամէն մարդ կը վախճար ու կը պոռար ըսելով.-

«Աւելի լաւ չէ՞ր մնայինք Եգիպտոս, ծառայէինք Փարաւոնին քան մեռնէինք այսպէս»:

- «Մի վախճաք» պատասխանեցի անոնց. «Աստուած ինք պ ի տ ի պ ա տ ե ր ա զ մ ի անոնց դէմ եւ դուք պիտի մ հ ա ք խաղաղ»:



Զ ե ն ք ս
բարձրացուցի
դէպի Կարմիր
Ծով եւ ջուրը
սկսաւ շարժիլ:
Ծուտով ծովուն
յ ա տ ա կ ը
երեւցաւ, ու
մենք քալեցինք

Եգիպտական բանակը կը գործածէր կարքեր որոնք ետերէն բաց էին եւ որոնց վրայ երեք անձեր կրնային կենալ:

Իրաքանչիւր կարք ունէր երկու անիւ եւ կ'առաջնորդուէր ձիով մը: Զինուորները կը կռուէին նետերով եւ աղեղներով:

Չուրերուն մէջէն:

Եգիպտացիներու բանակը

հետեւեցաւ մեզի:

**Ապա Աստուած ըսաւ որ ձեռքս
դարձեալ երկարեմ, ու
անմիջապէս Կարմիր Ծովուն
չուրերը վերագտան իրենց
նախկին ձեւը, ծածկելով**

**Եգիպտական բանակի
զինուորներն ու կենդանիները:**

Մենք ազատած էինք:

**Իսրայէլացիները տեսան թէ
ինչպէս Աստուած կը
պաշտպանէր իրենց:**

**Անոնք կը հաւատային
Աստուծոյ բոլոր խոստումներուն:**



**Մտածե՛
ասոր
մասին**

**Աստուած ըսաւ որ Իսրայէլացիները պէտք է
ազատ ըլլան: Թէեւ անոնք շատ յուսահատ
էին երբ շրջապատուած էին Կարմիր Ծովով
եւ Եգիպտական բանակով, սակայն Աստուած
չուրերը տեղափոխեց որպէսզի
Իսրայէլացիները անոնց մէջէն կարենան քալել:**

Աստուծոյ միջամտութեամբ ամէն բան կարելի է:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Հոկտեմբեր ամսուան մասնակցողներ եւ պատասխաններ

Մանկապարտէզի անկիւն

Յիսոս, Նազարէթ, Հնազանդ, զարգանար, մարմնով, մարդոց

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

1. գ. 405
2. ա. 1600
3. դ. 36
4. ա. Թարգմանչաց
5. բ. Աստուածաշունչը թարգմանել
6. Հօր, իմաստութիւն, խոսել, բանից, փրկեա, բազմամեղիս
7. ա. Մորենիի
8. ա. Կօշիկներդ հանէ
9. Սուրբ
10. Որովհետեւ Սուրբ է

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

1. ա. 1600
2. դ. 36
3. Արարատ
4. դ. 4 Սուրբ Աւետարանիշներուն
5. բ. Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս
6. բ. Առակներ
7. Աստուած, Ամենակալ, աներեւութից
8. Փնտոելու, փրկելու
9. Մատթէոս, Մարկոս, Ղուկաս
10. Աւետարան

Երկրորդականի անկիւն

1. գ. 4
2. Օշական
3. Եօթանասնից
4. 6,7,10,12
5. Մարկոս
6. Ս. Ղուկաս
7. գ. 100 կամ ՂԹ
8. ՌՃԺԱ
9. Մովսէս Խորենացի
10. Եղիշէ

Հոկտեմբեր Ամսուան Մասնակցողներ

Մանկապարտէզ

Անսխալ պատասխանողներ
Ցոլեր Անթեպեան, Նշան Կիրակոսեան,
Արա Միրզոյեան, Փաթիլ Կարապետեան,
Շանթ Պալուզեան, Յակոբ Գեպթանճեան

Նախակրթարան Ա. Բ. Գ. անկիւն

Խշխշեան Արշակ, Արագ Գաբթանճեան,
Արին Անթեպեան, Ռիթա Խշխշեան,
Դանիէլ Ակրեան, Եագուպեան Նանար,
Չարքազեան Ռիթա, Ժուխաճեան Աճի,
Ժուխաճեան Լոռի, Մաթոսեան Միեր,
Նասոյեան Նարեկ, Արմութլու Կասիա,
Սեթեան Նաթալի, Թերինեան Շողիկ :
Անսխալ պատասխանողներ
Սեւակ Պապիկեան, Կարապետեան
Զոհրապ, Կարապետեան Ալեք:

Նախակրթարան Դ. Ե. Զ. անկիւն

Լոռի Զինչինեան, Ռոզալին Զինչինեան,
Դանիա Ապրալեան, Հրայր Մատթէոսեան
Անսխալ պատասխանողներ
Առէն Պապիկեան, Դալար Գեպթանճեան

Երկրորդականի անկիւն

Փոլ Գիզիրեան, Կարօ Կարապետեան,
Քրիստին Լոշխաճեան, Յովիկ
Կարապետեան, Թամար Պուիքեան,
Քրիստին Կարապետեան, Գօգօ
Մաթոսեան, Աճի Մելեքեան, Արի
Միրզոյեան, Լորա Սարիմանուկեան

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Մանկապարտէզի անկիւն**



Յիսուս մանուկը տաճարին մէջ: Ամբողջացո՛ւր ըստ

Ղուկաս 2.46-49

երեք, մտիկ կ'ընէր, պատասխաններուն, փնտռէինք, իմաստութեան, տաճարին

-----օր եսք զինք գտան -----մէջ: Անիկա տաճարին ուսուցիչներուն հետ նստած՝ անոնց -----եւ հարցումներ կ'ուղղէր: Բոլոր անոնք որոնք իրեն մտիկ կ'ընէին, կը հիանային անոր -----եւ տուած -----վրայ:

Ծնողները երբ տեսան Յիսուսը, ապշած մնացին: Իր մայրը ըսաւ.

- Այս ի՞նչ ըրիր մեզի, տղա՛ս. ահա հայրդ ու ես տակնուվրայ եղած՝ քեզ կը -----:

Յիսուս ըսաւ անոնց.

- Ինչո՞ւ զիս ուրիշ տեղ կը փնտռէիք. չի՞ք գիտեր թէ հօրս տան մէջ պէտք է գտնուիմ:

**Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Ա. Բ. Եւ Գ. Դասարաններու անկիւն**

1. Ինչպիսի՞ անձ մըն էր Նոյ:

- Ա.- Զար
- Բ.- Բոնակալ
- Գ.- Ինազանդ եւ արդար
- Դ.- Բարի եւ աշխատասէր

2. Նոյ երեք որդիներ ուներ: Ի՞նչ են անոնց անունները:

- Ա.- Սամ, Քեմ եւ Յարէթ
- Բ.- Սեմ, Քեմ եւ Յարէթ
- Գ.- Սեմ, Քամ եւ Յարէթ
- Դ.- Սամ, Քամ եւ Յարէթ

3. Ե՞րբ տեղի ունեցաւ Նոյան Տապանին պատմութիւնը:

- Ա.- 2004 ին
- Բ.- Յիսուսի քրիստոսի ծնունդէն առաջ
- Գ.- Յիսուսի քրիստոսի ծնունդէն յետոյ
- Դ.- 1251 ին

4. Ինչո՞ւ ջրհեղեղը եղաւ Նոյին ժամանակ:

- Ա.- Որովհետեւ բոլոր մարդոց չարագործութիւնները շատցան:
- Բ.- Որովհետեւ կ'ուզէր ցոյց տալ Նոյին իր զօրութիւնը:
- Գ.- Որովհետեւ ամէն տարի կը պատահի:
- Դ.- Որովհետեւ բոլոր մարդերը արդար էին Նոյին պէս:

5. Ամբողջացո՞ւր

Զգործս ուղիղ արա ի մեզ, , եւ զգործս

Ճեռաց մերոց մեզ: Ամէն:

6. Ո՞ր թիւին կը վերաբերի Յիսուսի բառը:

- Ա.- Հինգ
- Բ.- Յիսուն
- Գ.- Քառասուն
- Դ.- Քառասուն-Հինգ

7. Ասոնցմէ որո՞նք Հրեշտակներու տրուած աննուններ են:

- Ա.- Սերովբէ
- Բ.- Քերովբէ
- Գ.- Գաբրիէլ
- Դ.- Միքայէլ

8. Մովսէս եւ իր ընկերները ինչպէ՞ս անցան Կարմիր Ծովը:

- Ա.- Քալելով
- Բ.- Նաւակով
- Գ.- Կամուրջին վրայէն
- Դ.- Լողալով

9. Այս տարի ե՞րբ պիտի տօնենք Սուրբ Յակոբին տօնը:

- Ա.- Շաբաթ, Դեկտեմբեր 17
- Բ.- Կիրակի, Դեկտեմբեր 18
- Գ.- Շաբաթ, Նոյեմբեր 26
- Դ.- Կիրակի, Նոյեմբեր 27

5. Ամբողջացո՞ւր Հայաստանեաց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Քայլերգին առաջին համարը:

Կիրակնօրեայ Սուրբ յարկին մենք ----- ենք լուսաբաղձ,
Կալծերու պէս -----
Ցայտած՝ սրտէն պերճ -----:
Ուստի քալենք -----,
Ո'վ հարազատ զարմ -----,
----- գլնացքով
Լոյս-աղբիւրին -----:

Ո՞րն է ճիշդ պատասխանը
Նախակրթարան Դ. Ե. Եւ Զ. Դասարաններու անկիւն

1 Կաթողիկոսին Մակդիրն Է՝ ՆՍՕՏՏ: Ի՞նչ կը նշանակէ իրաքանչիւր գիր:

U -----
 U -----
 O -----
 S -----
 S -----

2 Ամբողջացուր՝

Հաւատամք ի մի -----, ի հայրն -----՝ յարարիչն ----- եւ երկրի երեւելեաց եւ աներեւութից:
 Եւ ի մի -----, Յիսուս -----, Որդին -----՝ ծնեալն յԱստուծոյ ----- միածին՝ այսինքն ----- Հօր:

3 Նոյեմբեր ամսուն ո՞ր տօնը կը յիշատակենք:

Ա- Ամանոր
 Բ- Ամենալավ Սրբոց
 Գ- Զատիկ
 Դ- Անկախութեան օր

4 Յիսուս քանի Առաքեալներ ունէր:

Ա- 72
 Բ- 8
 Գ- 172
 Դ- 12

5 Գրէ՛ հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը:

6. Ի՞նչ է «Եկեղեցի» բառին սահմանումը:

7. Ով է հիմնադիրը եւ գլուխը Եկեղեցիին:

Մեր Տէրը ----- է

Եկեղեցիին Հիմնադիրն ու գլուխն է:

8. Եկեղեցին որո՞ւ մարմինն է:

Եկեղեցին ----- մարմինն
 է:

9. Որո՞նք են այս մարմինին անդամները:

10. Ի՞նչ է Յիսուսկը:

Ո՞րն է ճիշդ պատասխանը Երկրորդականի անկիւն

1 Պատարագի Թափօրի ընթացքին ի՞նչ պէտք է ըստնք երբ կի մօտենանք քահանային:

----- եւ զմեզ առաջի նման
----- Աստուծոյ:

2 Ի՞նչ կը կոչուի Պատարագի Երկրորդ բաժինը:

3 Ի՞նչ կը խորհրդանշէ Թափօրը:

4 Ե՞րբ է Յիսնակի առաջին օրը

Ա- Նոյեմբեր 16
Բ- Նոյեմբեր 18
Գ- Նոյեմբեր 20
Դ- Դեկտեմբեր 20

5 Այս տարի Ե՞րբ կը սկսի Յիսնակի պահքը:

Ա- Նոյեմբեր 17
Բ- Նոյեմբեր 19
Գ- Նոյեմբեր 21
Դ- Դեկտեմբեր 21

6. Յիսնակը, ո՞ր տօնէն Յիսուն օրեր առաջ է:

Ա- Ծնունդ
Բ- Զատիկ
Գ- Սուրբ Յակոբ
Դ- Սուրբ Պողոս Պետրոս

7. Աշխարհաբարով գրէ առաջին հարցումին պատասխանը:

7. Ի՞նչ է Աշխարհագալոցը:

8. Ամբողջացո՞ւր Քահանային Աղօթքը:

Տէր Աստուած ----- որ կարողութիւնդ
----- է եւ փառքդ
-----:

9. Գրէ՛ Պողոս Առաքեալի Եփեսացիներուն
նամակին 2.4-5

10. Ո՞վ է վերջին մարգարէն

Կարճ Հուրեր

. 13 Նոյեմբեր 2005 ին Պրն. Կարօ Նոխուտեան այցելեց դպրոց եւ շատ հետաքրքրական ձեւով իր պատգամը փոխանցեց Նախ. Դ. Ե. Ե. Զ. Եւ Երկրորդական դասարաններու աշակերտութեան:

Լոյս տեսած Է՝

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ Յիսուս Քրիստոսի Եւ ՍԱՂՄՈՍՆԵՐ

Այս 1,200 էջերէ բաղկացած գիրքը ունի հետեւեալ յատկութիւնները

- Իմաստային հարազատ թարգմանութիւն
- Պարզացուած լեզու
- Դիւրին ընթեռնելիութիւն
- Գիտական Օժանդակներ
 - Գլխարկումներ (headings)
 - Ծանօթագրութիւն (footnotes)
 - Բառարան
 - Ժամանակագրական տախտակ (timeline)
 - Աւետարաններու համաձայնութեան տախտակ
 - Առակներու եւ Հրաշքներու ցանկ
 - Ուղեցոյց Սաղմոսներու ընթերցանութեան

Ստանալու համար դիմել՝ Կիրակնօրեալ Դպրոց

Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել տնօրէն՝ Թորոս Պապիկեանին

հեռ. (514) 956-1277

Ելոնամակ director@sourphagop.org
կամ Կիրակի օրերը այցելել դպրոց